Հավելված N 4
ՀՀ կառավարության 2025 թվականի
փետրվարի 13-ի N 195-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ՈՐԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ՈՐԱԿԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու հետ կապված հարաբերությունները:

2. Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին կարող են որակվել, եթե համապատասխանում են սույն որոշման N 2 հավելվածով սահմանված չափանիշներին:

3. Սույն կարգի պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտների (ռազմարդյունաբերական համալիրի ամփոփ ցուցակում (ռեեստրում) գրանցված) կողմից Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդին (այսուհետ՝ ՌՏԳՏ խորհուրդ) ներկայացված գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների վրա:

ՌՏԳՏ խորհրդի կողմից ֆինանսավորման երաշխավորված գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների՝ որպես այդպիսին որակելու վերաբերյալ եզրակացություն տրամադրվում է ՌՏԳՏ խորհրդի կողմից, որը հաստատվում է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի կողմից:

ՌՏԳՏ խորհրդի եզրակացությունն ու այն հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի հրամանը սահմանված ժամկետում աշխատանքներն իրականացնողին և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե է ուղարկում Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը:

4. Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու համար էլեկտրոնային եղանակով հանձնաժողով է ներկայացվում հայտ, որին կցվում է գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների ծրագիրը, ներառյալ հայտի ներկայացման նպատակները (այսուհետ՝ ծրագիր): Ծրագիրը կարող է ներկայացվել հայերեն և անգլերեն լեզուներով: Ծրագրում ներառվում է տեղեկատվություն՝ գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների անվանումը (ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված տնտեսական գործունեության դասակարգչի նկարագրի), նպատակները, աշխատանքների իրականացման փուլերն ու ժամկետները, նախատեսվող ֆինանսական միջոցները, ստեղծվող աշխատատեղերը, ծրագրի շրջանակում ներառված՝ բացառապես մասնագիտական աշխատանքներ կատարող վարձու աշխատողների տվյալները (անունը, ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը (դրա բացակայության դեպքում՝ լիազորված մարմնի տրամադրած՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը): Ծրագիրը կարող է ներառել նաև այլ հանգամանքների, փաստերի, տվյալների նկարագրություն կամ այլ հիմնավորումներ:

Հայտի և ծրագրի ձևերը և լրացման կարգերը, ինչպես նաև ներկայացման ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով:

5. Հայտերը ներկայացվում են յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա ընթացքում: Այդ ժամանակահատվածից դուրս ներկայացված հայտերը ենթակա չեն քննարկման և քարտուղարության կողմից հետ են վերադարձվում:

6. Եթե հայտը և դրան կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում կամ չեն բավարարում սույն կարգի պահանջներին, կամ դրանցում ներառված տեղեկությունները լրացուցիչ հիմնավորումների կարիք ունեն, ապա քարտուղարությունը կամ հանձնաժողովը քարտուղարության միջոցով լրամշակման նպատակով վերադարձնում է հայտը: Լրամշակված և սույն կարգի պահանջներին կրկին չբավարարող հայտերը ենթակա չեն քննարկման:

7. Հայտը և կից ներկայացված փաստաթղթերը ենթակա չեն վերադարձման, բացառությամբ սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված դեպքերի:

8. Հայտի քննարկումն իրականացվում է հանձնաժողովի փակ նիստերի միջոցով: Հայտը հանձնաժողովի կողմից քննարկվում է ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել, քան հայտը ներկայացնելու օրվանից հետո 365-րդ օրը: Հայտի լրացուցիչ քննարկման անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտի քննարկումը կարող է հետաձգվել:

9. Հանձնաժողովի կողմից հայտը քննարկվում է աշխատանքներն իրականացնողի ներկայացուցչի մասնակցությամբ: Քննարկման օրվա, ժամի և վայրի (հասցե, սենյակ) մասին աշխատանքներն իրականացնողը պետք է տեղեկացվի առնվազն 5 աշխատանքային օր առաջ, հայտում ներկայացված էլեկտրոնային փոստին ծանուցմամբ: Պատշաճ տեղեկացված՝ աշխատանքներն իրականացնողի ներկայացուցչի բացակայությունը խոչընդոտ չէ քննարկման համար, սակայն կարող է հայտի քննարկումը հետաձգելու մասին որոշում ընդունելու հիմք հանդիսանալ:

10. Հայտի քննարկումը կարող է հետաձգվել նաև այն դեպքում, երբ որոշում ընդունելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ:

11. Աշխատանքների որակման վերաբերյալ հայտը կարող է մերժվել նաև այն դեպքերում, եթե հայտում և կից փաստաթղթերում ներկայացված տվյալներն ու տեղեկությունները հիմնավորված կամ հավաստի չեն:

12. Ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգը և ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը: Ծրագրերի աշխատանքների իրականացման ընթացքի և արդյունքների մասին հաշվետվությունները սահմանված ձևաչափով ներկայացվում են կոմիտե:

13. Կոմիտեն աշխատանքների իրականացման ընթացքի և արդյունքների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է աշխատանքներն իրականացնողի, այլ շահագրգիռ կողմերի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ կամ սույն կարգին համապատասխան հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև աշխատանքներն իրականացնողներից հարցման արդյունքում ձեռք բերված տվյալների ուսումնասիրությունների միջոցով:

14. Սույն կարգի 12-րդ կետում նշված հաշվետվությունն աշխատանքներն իրականացնողի կողմից կոմիտե չներկայացվելու, ներկայացված փաստաթղթերում կեղծ տեղեկություններ հայտնաբերվելու, ինչպես նաև աշխատանքներն իրականացնողի գործունեության մեջ էական խախտումների առկայության դեպքում կոմիտեն՝ դրանք բացահայտելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով կամ էլեկտրոնային ծանուցման եղանակով տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին, իսկ հանձնաժողովը տրամադրում է որպես գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ որակված աշխատանքների որակումը դադարեցնելու կամ չեղյալ ճանաչելու վերաբերյալ եզրակացություն:

15. Քարտուղարությունը, հանձնաժողովի անդամները և ենթահանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել հայտատուի բացառիկ իրավունքներին առնչվող բոլոր տեղեկությունների գաղտնիությունը:

16. Աշխատանքները որպես այդպիսին որակելու կամ աշխատանքների՝ որպես այդպիսին որակումը դադարեցնելու վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը և այն հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը այն հաստատվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարության կողմից ներկայացվում է հայտատուին և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:

17. Հանձնաժողովի եզրակացությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) գիտական հետազոտության և փորձարարական մշակումների աշխատանքի անվանումը՝ ըստ տնտեսական գործունեության դասակարգչի.

2) ֆինանսավորման աղբյուրները և արժեքը.

3) աշխատանքներն իրականացնողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը.

4) աշխատանքներն իրականացնող աշխատակիցների անունը, ազգանունը, ՀԾ համարանիշը կամ դա չունենալու վերաբերյալ համապատասխան տեղեկանքը.

5) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների ավարտի ակնկալվող ամսաթիվը:

18. Հանձնաժողովի կողմից տրամադրված դրական եզրակացությունը չեղյալ է ճանաչվում իրականացվող աշխատանքները ծրագրի նպատակներին և դրույթներին համապատասխան չիրականացվելու դեպքերում:

19. Աշխատանքների իրականացման ընթացքում փոփոխություններ առաջանալու դեպքում աշխատանքներ իրականացնողը պետք է դրա մասին գրավոր տեղեկացնի հանձնաժողովին:

20. Աշխատանքներն իրականացնողը կարող է ինքնակամ հրաժարվել Հարկային օրենսգրքով սահմանված հարկման առանձնահատկությունների կիրառումից՝ իր դիմումի համաձայն, որի հիման վրա հանձնաժողովի կողմից տրամադրվում է

որպես գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներ որակված աշխատանքների որակումը դադարեցնելու վերաբերյալ եզրակացություն: Այս դեպքում գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներ որակված աշխատանքների որակումը դադարեցվելու արդյունքում հարկային պարտավորությունների վերահաշվարկներ չեն կատարվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ